ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1
Հեռ. 060 38 00 01
E-mail: hven@hven.am, www.hven.am

No._____

«21» ____11____ 2022թ.

«ԷՔՍՊԵՐՏ ԴԻԱԼՈԳ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերությանը
/ք. Էջմիածին, Մաշտոցի 0 վարչական շենք/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
/պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ/

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության և «ԷՔՍՊԵՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊ ընկերության միջև 2021 թվականի նոյեմբերի 04-ին կնքվել է ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/63 ծածկագրով գույքի (ապրանքանյութական արժեքների) գնահատման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր /այսուհետ՝ նաև Պայմանագիր/, որի 1.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է նշված Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կողմից ներկայացվող գույքի (ապրանքանյութական արժեքների) գնահատման ծառայությունները /այսուհետ՝ նաև ծառայություն/, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել մատուցված ծառայությունը և վճարել դրա դիմաց:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության 2022թ. հոկտեմբերի 04-ին №02/26.3/2734-2022 գրությամբ էլեկտրոնային փոստով Կատարողին է ուղարկել ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան, Տաթև և Գորայք համայնքներում գտնվող թվով 13 հողակտորների

գնահատման հայտը՝ հետագայում ձեռք բերելու նպատակով: Սակայն պայմանագրով նախատեսված ժամկետներում Պատվիրատուին Կատարողի կողմից չեն ներկայացվել կատարված աշխատանքների հաշվետվությունները՝ վերոնշյալ գնահատման փաթեթի հանձնարարականը չստանալու պատճառաբանությամբ: «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կողմից 2022թ. հոկտեմբերի 25-ին էլեկտրոնային փոստով՝ (tigran.sahakyan@outlook.com) հասցեին փաթեթը կրկին ուղարկվել է, որից հետո Կատարողը կրկին չի կատարել իր պարտականությունները Պայմանագրի №1 հավելվածի համաձայն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԷՔՍՊԵՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊ ընկերության կողմից չեն կատարվել Պայմանագրով նախատեսված պարտականությունները, «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը, ղեկավարվելով Պայմանագրի 2.1.3 կետով, միակողմանի լուծում է «ԷՔՍՊԵՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊ ընկերության հետ 2021 թվականի նոյեմբերի 04-ին կնքված ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/63 ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գնումների և մատակարարման բաժին.
Կատարող՝ Վ. Հովհաննիսյան
☎ 060-380-040